

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, պետության կամ համայնքների հիմնարկների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, պետության կամ համայնքների ոչ առետրային և պետության կամ համայնքների 50%-ից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպությունների կողմից ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման գործընթացի հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև այդ հարաբերությունների կողմերի հիմնական իրավունքներն ու պարտականությունները կարգավորում է պետական գնումների համակարգը: Այսինքն՝ իր կարիքների համար ապրանքներ, աշխատանքներ, ծառայություններ ձեռք բերելիս պետությունն ինքը շուկայում հանդես է գալիս որպես պատվիրատու կամ որպես գնորդ: Առաջին հայացքից այդ գնումներն ուղղված են պետական մարմինների պահանջների բավարարմանը, բայց, ըստ էության, դրանք հասարակական կարիքների բավարարմանն ուղղված միջոցներ են: Պետության կողմից հասարակական միջոցների վերաբաշխումն այս դեպքում իրագործվում է ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների գնման և դրանք հասարակական պահանջումներին ծառայեցնելու միջոցով: Օրինակ՝ պետական գնման առարկա կարող են հանդիսանալ պետական որևէ կրթօջախի վերանորոգման աշխատանքները, հանրապետական կամ համայնքային նշանակության ճանապարհների հիմնանորոգման աշխատանքները և այլն: Ինչպես երևում է, այս աշխատանքների գնումն ուղղված է հասարակական պահանջումների բավարարմանը: Իսկ պետական գնումների ֆինանսավորման աղբյուրը հանրային ֆինանսներն են: Այդ նպատակին են ուղղվում նաև ներգրավված փոխառու միջոցների որոշ մասը, որոնք պետք է վերադարձվեն դոնոր կազմակերպություններին կամ պետություններին՝ փոխառության համար վճարվող տոկոսավճարների հետ միասին: Այսինքն՝ խիստ կարեւորվում է պետական ծախսերի արդյունավետ կառավարումը յուրաքանչյուր պետության համար: Հետեւաբար՝ հանրային միջոցները վատնումից և չարաշահումներից պաշտպանելու համար անհրաժեշտ են պետական գնումները կարգավորող խիստ օրենքներ և նորմեր: Դա պետությունների համար նախապայման է նաև Եվրամիությանը և Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու հարցում:

Հայաստանի Հանրապետությունում «Գնումների մասին» օրենքն առաջին անգամ ընդունվել է 2000թ. օգոստոսին, որն ուժի մեջ է մտել 2001թ. հունվարին: Կարելի էր պետական ծախսերի կառավարման արդյունավետ համակարգի առկայությունը և բյուջետային գործընթացում կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու անհրաժեշտությունը՝ հանրային ֆինանսների բնագավառում իրականացվող

առանձին բարեփոխումների զուգահեռ, 2000թ. Հայաստանի Հանրապետությունում սկսվեց հանրային հատվածում գնումների իրականացման միասնական և միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգի ներդրումը: Նշված համակարգի ներդրման և բարեփոխումների ուղղությամբ իրականացված միջոցառումներն ամփոփելով՝ 2004թ. դեկտեմբերին ընդունվեց «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքը, որն ուժի մեջ մտավ 2005թ. հունվարին և գործում է մինչև օրս: Պետք է նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը նախագծվել է ՄԱԿ-ի գնումների մոդելային օրենքի հիման վրա և բավարարում է ԱՀԿ-ի Գնումների համաձայնագրի ու Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական խարտիայի պայմաններին: Վերոնշյալ օրենքի համաձայն՝ պետական գնումների համակարգը մշակվել է այնպես, որ պետության կարիքների համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքներն ու ծառայությունները ձեռք են բերվում հրապարակայնորեն և մրցութային հիմքով (մրցակցային գնումներ), ինչը պատվիրատուին (գնորդին) հնարավորություն է տալիս տեխնիկապես, որակապես և տնտեսապես գնահատել իրեն ներկայացված առաջարկները (հայտերը): Տնտեսական շահավետության որոշիչ գործոնը մրցույթի մասնակիցների կողմից առաջարկվող ամենացածր գնով ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումն է: ՀՀ կառավարության 2009թ. դեկտեմբերի 17-ի թիվ 1521-Ն որոշմամբ՝ ՀՀ կառավարության 2008թ. հունիսի 5-ի թիվ 853-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների համաձայն՝ որևէ գնում կատարելիս նախօրոք ստեղծված մրցութային հանձնաժողովը հատուկ նիստում ներկայացված գնային առաջարկների հիման վրա որոշում է 1-ին, 2-րդ, 3-րդ և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Այնուհետ, հատուկ նիստի արդյունքների հրապարակման օրվան հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում, մրցույթի հանձնաժողովի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցը գրությամբ պատվիրատուին է ներկայացնում իր ստորագրած, իսկ հնարավորության դեպքում կնքած՝ մրցույթի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Այսինքն՝ գնման պայմանագիր կնքելու իրավունքը շնորհվում է այն մասնակցին, որը, հիմնվելով պատվիրատուի սահմանած գնահատման չափանիշների վրա, առաջարկում է լավագույն պայմանները: Շուկայական տնտեսության պայմաններում մրցակցության ապահովումը դրական է անդրադառնում մասնակիցների կողմից առաջարկվող գների և հայտերի որակի վրա: Այսինքն՝ այս մեխանիզմն օգնում է, որ հանրային միջոցները տնտեսվեն և օգտագործվեն արդյունավետ: Հարկ է նշել, որ պետական գնումները կատարվում են պատվիրա-

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՈՐՊԵՍ ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՐԴԻ

Աննա
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Տնտեսագետ



2003-2010թթ. ՀՀ-ում պետական գնումների համար հատկացվել է պետական բյուջեով նախատեսված ընդհանուր ծախսերի հետևյալ մասը

Պետ. գնումները՝ պետբյուջեով նախատեսված ընդհ. ծախսերում (պլանային)	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010
	76%	65%	67%	67%	67%	37%	36%	33%

տուրի նախապես կազմած ծախսերի նախահաշիվների շրջանակներում: Իսկ շինարարական աշխատանքների գնման դեպքում ֆինանսական միջոցներ նախատեսվում են սահմանված կարգով հաստատված եւ փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա, առանց որոնց առկայության շինարարական աշխատանքների կատարման համար գումարներ նախատեսվել չեն կարող: Սա կանխում է պետական միջոցների՝ նախկինում երբեմն գոյություն ունեցող անհիմն «դուրսգրումները»:

Պետական գնումների համակարգի կարելուրության վերաբերյալ ավելի հստակ պատկերացում կազմելու համար ներկայացնենք թվային տվյալներ՝ 2003-10թթ. կտրվածքով (տես՝ արդյունակը):

Պետական գնումների նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում են գանձապետական բաժանմունքները, որոնց միջոցով էլ կատարվում է գնումների ֆինանսավորման համար նախատեսված դրամական հոսքերի կառավարումը:

ՀՀ-ում գնումների գործընթացը կարգավորող եւ համակարգող մարմինը ՀՀ ֆինանսների նախարարությունն է, որը համակարգում է գնումների վերաբերյալ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները, հաստատում գնումների գործընթացում օգտագործվող փաստաթղթերի օրինակելի ձեւերը, քննարկում գնման գործընթացի վերաբերյալ ստացված բողոքները եւ դրանց հիման վրա կազմակերպում ստուգումներ եւ ընդունում պատվիրատուների համար կատարման ենթակա որոշումներ:

Պետական ֆինանսների արդյունավետ կառավարման եւ վերահսկման գործում մեծ ներդրում ունի նաեւ ՀՀ վերահսկիչ պալատը, որը պարբերաբար ստուգումներ է իրականացնում պետական կառույցներում՝ չարաշահումներն ու օրենսդրական բացթողումները բացահայտելու նպատակով՝ մեծ ուշադրություն դարձնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի դրույթների պահպանության ստուգմանը:

Միջազգային փորձագետների դիտարկմամբ՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությունը գնահատվում է բավարար եւ նշանակալի պետական ծախսերի կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման ու այդ համակարգում չարաշահումները կանխարգելելու գործում:

Հարածքային զարգացումը պայմանավորված է տնտեսական շրջանառության մեջ ներգրավված տեղական բնական ռեսուրսների մշակման վերամշակման, ներմուծվող ռեսուրսների եւ առկա արտադրական միջոցների ծավալների եւ արդյունավետ օգտագործմամբ: Մարզերի տնտեսական զարգացման իրավիճակը բնութագրել ենք մի կողմից՝ ռեսուրսային, մյուս կողմից՝ ֆինանսական ապահովվածության տեսանկյունից:

Արագածոտնի մարզում տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության տնտեսության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են. արդյունաբերություն՝ 1.8%, գյուղատնտեսություն՝ 7.6%, շինարարություն՝ 0.8%, մանրածախ առեւտուր՝ 0.6%, ծառայություններ 0.4%: Մարզի տնտեսության հիմքը արդյունաբերությունը եւ գյուղատնտեսությունն են: Մարզի աշխարհագրական դիրքը եւ բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկ մշակաբույսերի արտադրություն) եւ անասնաբուծության մեջ:

Արարատի մարզում տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է: Այն հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության եւ բանջարաբուծության մեջ: Ներկայում մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության տնտեսության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են. արդյունաբերություն՝ 8.0%, գյուղատնտեսություն՝ 13.1%, շինարարություն՝ 1.2%, մանրածախ առեւտուր՝ 1.5%, ծառայություններ՝ 0.8%: **Արմավիրի մարզը** առանձնանում է զարգացած գյուղատնտեսությամբ եւ արդյունաբերությամբ: Չարգացած են անասնապահությունը, բուսաբուծությունը, խոզաբուծությունը, թռչնաբուծությունը եւ հացահատիկ մշակությունը: Արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, ըմպելիքի եւ շինանյութերի արտադրություններով: Ներկայում մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության տնտեսության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են. արդյունաբերություն՝ 4.5%, գյուղատնտեսություն՝ 15.1%, շինարարություն՝ 1.0%, մանրածախ առեւտուր՝ 2.6%, ծառայություններ՝ 0.8%:

Գեղարքունիքի մարզում տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես՝ հացահատիկ, կարտոֆիլի, բանջարեղենի եւ անասնաբուծական մթերքի արտադրությունները: Մարզը վայրի թարմ ձկան հիմնական մատակարարն է: Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Կարելուր նշանակություն ունի նաեւ մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքի արտադրությունը: Ներկայում մարզի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության տնտեսության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են. արդյունաբերություն՝ 1.4%, գյուղատնտեսություն՝ 14.2%, մանրածախ ապրանքաշրջանառություն՝ 1.0% եւ բնակչությանը մատուցված ծառայություններ՝ 0.6%:

Լոռու մարզում տնտեսության առաջատար ճյուղերը գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունն են: Գյուղատնտեսության ոլորտում առանձնանում են հացահատիկ, կարտոֆիլի, բանջարեղենի եւ անասնապահական մթերքի արտադրությունները: Մարզի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, մասնավորապես՝ մետաղագործական արդյունաբերություն եւ սննդամթերքի արտադրություն ճյուղերը: Ներկա-